ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

04.05.2023

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2023 թվականի ապրիլի 28-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2023-1-2 Լ որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 62,213,114,000 (վաթսուներկու միլիարդ երկու հարյուր տասներեք միլիոն մեկ հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ՓԲԸ զուտ շահույթը (հարկերի նվազեցումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

1) 3,110,656,000 (երեք միլիարդ մեկ հարյուր տաս միլիոն վեց հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամի չափով, որը կազմում է 62,213,114,000 (վաթսուներկու միլիարդ երկու հարյուր տասներեք միլիոն մեկ հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում,

2) Մինչև 18,000,000,000 (տասնութ միլիարդ) ՀՀ դրամ բաշխել «Արդշինբանկ» ՓԲԸ հասարակ բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերին որպես շահութաբաժիններ՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության համամասնությունների:

Սույն ենթակետով սահմանված շահութաբաժինները բաշխել սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման:

Վճարումներն իրականացնել օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման բացակայության հանգամանքը «Արդշինբանկ» ՓԲԸ ֆինանսական դեպարտամենտի կողմից հաստատելուց հետո:

Սույն ենթակետում նշված շահութաբաժինների վճարումն իրականացնել համապատասխան գումարները «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու կարգով,

3) 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարել՝ հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 91.3. կետի 1-ին ենթակետի:

Սույն ենթակետով սահմանված տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ՝ համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ բանկային հաշվին փոխանցելու միջոցով,

4) մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

2. Տարեկան շահութաբաժինները վճարել Բանկի այն հասարակ բաժնետոմսերի և «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են Բանկի համապատասխանաբար հասարակ և արտոնյալ անվանական բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի ռեեստրներում՝ 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ: